# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամ համայնք
ՀՀ Արագածոտնի մարզ, Շամիրամ 1փ., 24 շենք, /093.43.43.58/, shamiram.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N46-Ն

### ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետի, 11-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին կետի համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել համայնքի տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագիծը համաձայն հավելվածի:

**Կողմ-5** **Դեմ-0** **Ձեռնպահ -0**

Ա. Ալիյան

Ռ. Ադեյան

Ա. Ամոյան

Յ.Ուսուբյան

Լ.Ղազարյան

**Շամիրամ համայնքի ղեկավար՝** **Մրազ Բրոյան**

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ
գյուղական համայնքի ավագանու
27-ը նոյեմբերի 2019թ. N 46

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

***ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝***

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

***համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝***

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական [illegible] կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների

Շամիրամ համայնքի ղեկավար՝ Մրազ Բրոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամ համայնք
ՀՀ Արագածոտնի մարզ, Շամիրամ 1փ., 24 շենք, /093.43.43.58/, shamiram.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N47-Ն

### ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի պահանջներով. համայնքի ավագանին.

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Շամիրամ համայնքի ղեկավարի ամսեկան դրույքաչափը սահմանել 290 000(երկուհարյուր ինիսուն հազար) ՀՀ դրամ:

**Կողմ-5** **Դեմ-0** **Ձեռնպահ -0**

Ա. Ալիյան

Ռ. Ադեյան

Ա. Ամոյան

Յ.Ուսուբյան

Լ.Ղազարյան

**Շամիրամ համայնքի ղեկավար՝** **Մրազ Բրոյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամ համայնք
ՀՀ Արագածոտնի մարզ, Շամիրամ 1փ., 24 շենք, /093.43.43.58/, shamiram.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N48-Ն

### ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 9, 27 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Հաստատել Շամիրամի համայնքապետարանի աշխատակազմի 2020 թվականի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

***Կողմ-5*** ***Դեմ-0*** ***Ձեռնպահ -0***

Ա. Ալիյան

Ռ. Ադեյան

Ա. Ամոյան

Յ.Ուսուբյան

Լ.Ղազարյան

***Շամիրամ համայնքի ղեկավար՝*** ***Մրազ Բրոյան***

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ
գյուղապետարանի աշխատակազմի
ավագանու
27 նոյեմբերի 2019թ. N 48
որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը` 7
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 6.4

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 290000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 218900 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 199900 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 199900 |
| Ակումբի վարիչ | 1 | 92500 |
| Անասնաբույժ | 0.4 | 36000 |
| Սպասարկող անձնակազմ | | |
| Հավաքարար | 1 | 92000 |
| Ընդամենը | 6.4 | **1129200** |

Շամիրամ համայնքի ղեկավար` Մ. Հ. Բրոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ**
**ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամ համայնք
ՀՀ Արագածոտնի մարզ, Շամիրամ 1փ., 24 շենք, /093.43.43.58/, shamiram.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N49-Ն

## ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի 2020թվականի առաջնահերթ խնդիրները. համայնքի ավագանին.

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Շամիրամ համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը՝ համաձայն 1,2,3,4,5,6 հատվածների:

*Կողմ-5* *Դեմ-0* *Ձեռնպահ -0*

Ա. Ալիյան

Ռ. Ադեյան

Ա. Ամոյան

Յ.Ռւսուբյան

Լ.Ղազարյան

***Շամիրամ համայնքի ղեկավար՝*** ***Մրազ Բրոյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շամիրամ համայնք
ՀՀ Արագածոտնի մարզ, Շամիրամ 1փ., 24 շենք, /093.43.43.58/, shamiram.aragatsotn@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 նոյեմբերի 2019 թվականի N50-Ն

***ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջներով. Համայնքի ավագանին

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝***

Հաստատել Շամիրամ համայնքում սոցիալական աջակցության չափորոշիչները, ըստ հավելվածի:

***Կողմ-5*** ***Դեմ-0*** ***Ձեռնպահ -0***

Ա. Ալիյան

Ռ. Ադեյան

Ա. Ամոյան

Յ.Ուսուբյան

Լ.Ղազարյան

***Շամիրամ համայնքի ղեկավար՝*** ***Մրազ Բրոյան***

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ
գյուղական համայնքի ավագանու
27 նոյեմբերի 2019թ. N 50

## ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Նոր ծնված երեխաներին 40 000 – 50 000 դրամ
2. Սոցիալապես անապահով ընտանիքներ –50 000- 70 000 դրամ
3. Հաշմանդամության կարգ ունեցողներ - 60 000 - 90 000դրամ
4. Բուժման և վիրահատության կարիք ունեցողներ- 80 000 - 100 000դրամ
5. Միայնակ թոշակառուներ – 60 000 – 80 000 դրամ

*Շամիրամ համայնքի ղեկավար՝* *Մրազ Բրոյան*